ՀՏԴ 929:891.981 Բակունց + 891.981

Doi:10.54503/0135-0536-2024.3-78

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ
ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՀ (1936–1937 թթ.)*

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Ակսել Բակունց, քաղաքական հալածանքներ, ձերբակալություն, կալանք, հարցաքննություն, դատավճիռ, գնդակահարություն:

Նախաբան

Ակսել Բակունցը (Ալեքսանդր Թևոսյան) ծնվել է Գորիսում 1899 թ. հունիսի 13-ին (հին տոմարով՝ հունիսի 1-ին): Ընտանիքը բազմանդամ էր, դժվարություններով մեջ: 1905–1910 թթ. Գորիսում ծխական դպրոցն ավարտելուց հետո 1910–1917 թթ. կրթությունը շարունակել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1919–1920 թթ. ուսանել է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի գյուղատնտեսական բաժնում, իսկ 1920–1923-ին նույն մասնագիտությամբ կրթությունը շարունակել է Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտում: Ավարտելուց հետո նախ՝ Գորիսում, ապա՝ Երևանում աշխատել է մասնագիտությամբ:

1913-ին՝ 14 տարեկան հասակում, Թիֆլիսի «Աղբյուր» մանկական ամսագրում տպագրվում է նրա «Հիմար մարդը» հեքիաթը, որը հայտնի բանահյուսական նյութի մշակումն էր: 1915 թ. մի քանի ուշագրավ գրվածքներով հանդես է գալիս Շուշիի «Փայլակ» թերթում: 1915–1916 ուսումնական տարում ուսուցչություն է արել Սիսիանի Լոր գյուղում:

1917 թ. աշնանը զինվորագրվում է Տուրվեստանսկի, ապա՝ Երզնկայի գնդերին և մասնակցում Մամախաթունի, Բայբուրդի, Էրզրումի, Սարիղամիշի, Կարսի, Սելիմի, Արդահանի, Աշկալայի, Իլիջայի կռիվներին և Սարդարապատի ճակատամարտին[1]:

1924–1925 թթ. «Մարտակոչ» և «Խորհրդային Հայաստան» թերթերում լույս են տեսնում Բակունցի «Գավառական նամականի» և «Մեր գյուղեր» ակնարկաշարերը: Ե. Չարենցն արդեն նկատել էր նրան, հանդիպումը կայանում է 1926 թ. մարտին, որից հետո Բակունցը դառնում է Չարենցի ղեկավարած «Նոյեմբեր» գրական խմբակցության անդամ: Նա արդեն լիարժեք գրական կյանքի և գործունեության մեջ էր. 1927-ին լույս են տեսնում

---

* *Ներկայացվել է 20. VI. 2024 թ., գրախոսվել է 14. VIII. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:*

[1] *Տե՛ս Բ ա կ ո ւ ն ց. 1984, 386:*

«Մթնաձոր» պատմվածքների ժողովածուն և «Հովնաթան Մարչ» երգիծական վիպակը:

1928 թ. մարտի սկզբին Ա. Բակունցը դիմում է ՀԿ(բ)Կ Կենտկոմ՝ խնդրելով իրեն ազատել հողժողկոմատում զբաղեցրած պաշտոնից և նվիրվելու «բացառապես գրական աշխատանքի»: Դրանից հետո նա խմբագրական աշխատանքներ է կատարում գրական մամուլում, աշխատում Հայկինոյի սցենարական բաժնում: Նրա սցենարներով (բեմարք) նկարահանվում են համր ֆիլմեր[2]: Գրում և տպագրում է իր պատմվածքներն ու «Կարմրաքար», «Որդի որոտման» և «Խաչատուր Աբովյան» վեպերը, որոնք մեզ են հասել այն չափով, որքանով ժամանակին տպագրվել են մամուլում[3]:

Ա. Բակունցի վաստակն արժանիորեն գնահատվում է և՛ հայրենիքում՝ Եղիշե Չարենց, Հարություն Սուրխաթյան, Ռաֆայել Ալթայան, Խորեն Սարգսյան, և՛ սփյուռքում՝ արժանանում է «Տիգրան Կամսարական» գրական մրցանակին, նրա մասին գրում են Լևոն Բաշալյանը, Շավարշ Նարդունին, Համաստեղը, Պետրոս Զարոյանը, Զապել Եսայանը:

1934 թ. հունիս-հուլիս ամիսներին միանում է գրականության լեզվի շուրջ ընթացող քննարկումներին: Նույն թվականի օգոստոսի 1–6-ին մասնակցում է Հայաստանի գրողների, իսկ օգոստոսի 17-ից սեպտեմբերի 1-ը՝ ԽՍՀՄ գրողների հիմնադիր առաջին համագումարներին և ելույթներ ունեցել: Բարձրացող տաղանդը թռիչքի մեջ էր, բայց չարամիտ բանսարկությունները կասեցրին այդ թռիչքը:

1933 թվականից Բակունցն արդեն քաղաքական մեղադրանքների թիրախ էր: Մեղադրանքների առիթ է դառնում նրա «Ծիրանի փողը» (1933) հայրենասիրական պատմվածքը, որը մեկնաբանում են որպես «նացիոնալիզմ» և «անցյալի իդեալականացում»: Հաճախակի էր հոլովվում «Բակունցի խմբակ» մեղադրական արտահայտությունը: Մամուլում և ժողովներում հաճախակի են նրան քաղաքական պիտակներ հասցեագրում Նաիրի Զարյանը, Հրաչյա Քոչարը, Հարություն Մկրտչյանը, Նորայր Դաբաղյանը և ուրիշներ: Քաղաքական մթնոլորտն աստիճանաբար լարվում է և ազգային դեմք ու դիմագիծ ունեցող բոլոր գրողները ենթարկվում են մեղադրանքի, որին հաջորդում է կալանքն ու հաշվեհարդարը:

Բակունցը և դաշնակցությունը

1933 թվականից սկսած Բակունցի հասցեին հաճախակի էր հնչում «դաշնակցական» մեղադրանքը: Բացատրենք իրողությունը:

1915 թ. օգոստոսի 28-ին Բակունցը դիմում է Հայկական կենտրոնական կոմիտե՝ հայ գաղթականներին օգնելու և հայրենիքին իր հնարավորությունների առավելագույնով ծառայելու պատրաստակամությամբ[4]: Դրանից հետո ընդունվում է Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության շարքերը:

---

[2] *1935-ից ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի ցուցումով գրում-մշակում էր «Զանգեզուր» հնչուն ֆիլմի բեմարքը:*

[3] *«Մթնաձոր»-ից հետո պատմվածքների ժողովածուներից հիշարժան են «Սև ցեղերի սերմնացանները» (1933), «Անձրևը» (1935), «Եղբայրության ընկուզենիներ»-ը (1936):*

[4] *Բ ա կ ո ւ ն ց. 1984, 369:*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2024 № 3

Կուսակցության եռանդուն գործիչներից է եղել մինչև 1919 թ.: 1936–1937 թթ. հարցաքննությունների ժամանակ հրաժարվել է կուսակցության անդամ լինելու փաստից և հայտարարել. «... մինչև 1917 թ. նոյեմբերը ես եղել եմ աշակերտական միության անդամ»[5]: «2. VII. 1937» թվագրությունն ունեցող նույն օրվա երկրորդ դիմումը ՀԽՍՀ ներքին գործերի ժողովրդական կոմիսար Խաչիկ Մուղդուսուն՝ ամբողջությամբ նվիրված է այդ հարցի բացահայտմանը[6]:

Այս ընթացքում՝ 1917 թ. ապրիլի վերջին, Բակունցը Բաքվում մասնակցել է ՀՀԴ կոմիտեի շրջանային ժողովին, ղեկավարել սահմանադիր ժողովի ընտրությունները Ղափանի շրջանում: Այս ոգևորությամբ էլ՝ որպես կամավոր, 1917 թ. դեկտեմբերի 26-ին Կարինում միացել է գործող բանակին, իսկ մայիսի 21–29-ին, ինչպես նշեցինք, մասնակցել Սարդարապատի ճակատամարտին: 1918 թ. դեկտեմբեր – 1919 թ. մայիս ժամանակահատվածում եղել է Հայաստանի Հանրապետության նիստերի արձանագրող: Առանց կուսակցության անդամ լինելու՝ նրան այս գործը չէին վստահի: Նաև ավելացնենք, որ աշխատակցում էր դաշնակցության մամուլին՝ «Ժողովուրդ», «Հայաստանի աշխատավոր», «Հառաջ», «Զանգ»:

1923 թ. նոյեմբերի 20–23-ին Երևանում Բակունցը ղեկավարում է Հայաստանի նախկին դաշնակցականների լուծարային համագումարը, որի ղեկավար-կազմակերպիչն էր՝ նախագահը: Հանդես է եկել համագումարի բացման խոսքով, զեկուցմամբ: Խմբագրել է «Նախկին շարքային դաշնակցականների համահայաստանյան համագումարի արձանագրությունները» գիրքը և հետևել տպագրությանը (Երևան, 1923, 142 էջ): Համագումարի կապակցությամբ նոյեմբերի 20-ին լույս է տեսել Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը նախապատրաստող բյուրոյի «Լրաբեր» մեկօրյա թերթը, որի հրատարակչական պատասխանատուն ևս Բակունցն էր: Թերթում զետեղված է նրա «Ովքեր են հեռանում դաշնակցությունից» հոդվածը: Համագումարի կապակցությամբ հանրապետական մամուլում հանդես է եկել այլ հրապարակումներով[7]:

Հիմա հարց՝ եթե Բակունցը նախկինում կապված չլիներ դաշնակցության հետ, ինչո՞ւ հատկապես նա պետք է ղեկավարեր նախկին դաշնակցականների լուծարային համագումարը, պատասխանատու լիներ և՛ տպագրված գրքի, և՛ մամուլի օրգանի համար:

Ահա այստեղից էլ՝ նրան ուղեկցող ձայները, որոնք 1936–1937 թթ. վերածվեցին քաղաքական վայրահաչության:

Ձերբակալություն

1936 թ. հունիսի 2-ին Մոսկվայի «Նացիոնալ» հյուրանոցում Ակսել Բակունցը հանդիպում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանին: Քննարկում են Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն, լուսավորության ժողկոմ Ներսիկ Ստեփանյանի ձերբակալության հարցը, որը տեղի էր ունեցել մայիսի 21-ին: Խոսում են նաև «Զանգեզուր» ֆիլմի բեմարքի մասին: Ստեփանյանի ձերբակալությունից հետո Մոսկվայում Բակունցի վրա սահ-

---

[5] Գասպարյան. 2009, 266:
[6] Գասպարյան. 2009, 265–269:
[7] Տե՛ս Գասպարյան. 2009, 302–326:

մանվում է Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի (ՆԳԺԿ) մարմինների հսկողություն:

Ընդամենը երկու օր անց՝ հունիս 4-ին, ՀԳՄ ժողովը Բակունցի բացակայությամբ նրան դատապարտում է որպես «ժողովրդի թշնամի»: Նրա դեմ խոսում են Վաղարշակ Նորենցը, Վահրամ Ալազանը, Հարություն Մկրտչյանը, Նաիրի Զարյանը, Նորայր Դաբաղյանը և ուրիշներ: Ժողովը որոշում է Բակունցին հեռացնել կուսակցությունից: Հուլիս 9-ին ՀԳՄ ժողովը վերստին դատապարտում է Բակունցին: Ելույթ են ունենում Նաիրի Զարյանը, Հմայակ Սիրասը, Գուրգեն Հովնանը, Վաղարշակ Նորենցը, Հայկ Գյուլիքևխյանը, Վահրամ Ալազանը, Հարություն Մկրտչյանը, Նորայր Դաբաղյանը և ուրիշներ:

Դեպքերը զարգանում են վտանգավոր արագությամբ. հուլիս 9-ի երեկոյան Թիֆլիսում 1932-ից Անդրերկրկոմի առաջին քարտուղար Լավրենտի Բերիան սպանում է 1930 թ. մայիսից ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանին:

Հուլիս 14-ին ՀԳՄ ժողովն արդեն դատապարտում է Խանջյանին և նրա կողմից «հովանավորված» գրողներին, այդ թվում՝ Բակունցին: Բանսարկուներից պրոլետգրողների առաջնորդներից գրող, քննադատ Հարություն Մկրտչյանն այդ օրերին մամուլում մոլեգնող, այսպես կոչված, խանջյանականների մերկացումների մասին գրել է. «Մեզ հրավիրում են ՀԿԿ Կենտկոմ: Հավաքույթը ղեկավարում է Կենտկոմի պրոպագանդայի բաժնի վարիչ Աբել Օրդուխանյանը: Նա դիմում է մեզ. – Գրեցե՛ք, մերկացրե՛ք այդ նացիոնալիստներին: Եվ այն էլ հականե-հանվանե: Ընկեր Նաիրի Զարյան՝ Դո՛ւք, ընկեր Հրաչյա Քոչար՝ Դո՛ւք, ընկեր Սիրաս՝ Դո՛ւք, ընկեր Հովիկ Մելիքյան՝ Դո՛ւք: <…>: Անկեղծորեն պիտի ասեմ, որ նրանցից ոմանք՝ հենց նույն Նաիրի Զարյանն ու Հրաչյա Քոչարը, համոզված էին, որ Ակսել Բակունցը, իրոք, հակահեղափոխական էր»[8]:

1936 թ. հուլիսի 30-ին Բակունցն անսպասելի վերադառնում է Մոսկվայից: Հայաստանում նրան սպասում էին ՆԳԺԿ գործակալները: Հավանաբար, հասել է Թիֆլիս, այնտեղից գնացել Դիլիջան, ուր հրաժեշտ է տվել ընտանիքին՝ հիվանդությունից՝ արյան վարակումից, ապաքինվող որդուն՝ Սևադային և կնոջը՝ Վարվառա Զիվիջյանին:

Բակունցն արդեն քաղաքական շուրջկալի մեջ էր: Օգոստոս 3-ին նրան ներկայացրել են ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ամատունուն: Նրանց զրույցը սղագրվել է: Օգոստոսի 5-ին, 7-ին Երևանում, մինչև ձերբակալությունը, Բակունցը հարցաքննվել է ՆԳԺԿ մարմինների կողմից: Օգոստոսի 9-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն որոշում է Բակունցին կուսակցությունից հեռացնելու և «հակահեղափոխական ազգայնամոլական գործունեության համար ձերբակալելու մասին»[9]: Նույն օրը Բակունցը ձերբակալվում է: Նրա դեմ մեղադրանք է հարուցվում ըստ ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 67, 68 հոդվածների: Հետագայում ավելացվում են նոր հոդվածներ՝ 19–65, 78: Բակունցը մեղադրվում է «խմբակային հանցավոր գործունեության մեջ»[10]:

Ձերբակալության օրվանից մինչև 1937 թ. փետրվարի 4-ը ՆԳԺԿ աշխատակիցների կողմից Բակունցը բազմիցս ենթարկվել է դաժանագույն հար-

[8] *«Գրական թերթ» (Երևան), 17. III. 1989:*
[9] *Գասպարյան. 2009, 203:*
[10] *Գասպարյան. 2009, 203:*

ցաքննությունների և առերեսումների, նրան ենթարկել են ֆիզիկական բռնություններ:

Ձերբակալության հաջորդ օրը Երևանում՝ Նալբանդյան 80 հասցեով, խուզարկել են Բակունցի բնակարանը: Ըստ արձանագրության՝ տարել են. վեց նամակ, երեք նոթատետր, մեկ ընդհանուր տետր, երկու ալբոմ, յոթ միավոր տարբեր գրառումներ, «Զանգեզուր» ֆիլմի բեմարքի երեք «վարիանտ» և այլ նյութեր:

Կնոջ «Ցուցմունքները»

Բանտում Բակունցին կինը՝ Վարվառա Զիվիջյանը, այցելել է երեք անգամ՝ 1936 թ., սեպտեմբեր-հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Վերջին երկու այցելության ժամանակ նրա հետ է եղել նաև նրանց միակ որդին: Արդարացումից առաջ, ըստ ամենայնի համապատասխան մարմինների պահանջով, կինը հանդես է եկել «Ցուցմունքներով». «1936 թ. գարնանը Բակունցն այդ աշխատանքը [«Զանգեզուր» բեմարքը] հիմնականում ավարտել էր: Հայաստանի կոմկուսի Կենտկոմի նախկին քարտուղար Ա. Խանջյանը համառորեն պնդում էր, որ Բակունցը 2–3 ամսով մեկնի Մոսկվա՝ կինոսցենարը քննարկելու: Նրա համար շատ դժվար էր հիվանդ երեխային թողնել ծանր կացության մեջ, բայց, գիտակցելով հանձնարարության կարևորությունը, մեկնեց: Ես հիվանդ երեխային տեղափոխեցի Դիլիջան: Բակունցը Երևան վերադարձավ օգոստոսի սկզբին և 1936 թ. օգոստոսի 9-ին ձերբակալվեց»[11]*:*

Այնուհետև նա նկարագրում է հանդիպման պահերը. «Առաջին տեսակցության ժամանակ նա քիչ էր փոխվել: Նրա տրամադրությունը համեմատաբար առույգ էր, զգացվում էր, որ իր ձերբակալությունը համարում էր ինչ-որ թյուրիմացության հետևանք, որը շատ շուտ պիտի բացահայտվեր: Հոկտեմբերին ես նրան տվեցի հերթական սննդամթերքը և ստացա նրա օգտագործված սպիտակեղենը: Վերադառնալով տուն՝ մերկ մարմնին հագած նրա վերնաշապիկի վրա նկատեցի արյան հետքեր:

Հոկտեմբերի վերջին ինձ կանչեցին տեսակցության, ընդ որում՝ զգուշացնելով, որ ես պարտադիր ներկայանամ երեխայի հետ: Դժվար էր ինձ հետ վերցնել երեխային, բայց ես չհամարձակվեցի գնալ առանց նրա: Տեսակցությունը չափազանց ծանր էր: Բակունցը մեկ ամսվա ընթացքում այնքան էր փոխվել, որ ես դժվարությամբ ճանաչեցի այն մարդուն, ում ես գիտեի երկար տարիների ընթացքում:

Ամբողջ տեսակցության ժամանակ Բակունցը հեծկլտում էր՝ կորցնելով ինքնատիրապետումը»[12]*: Այս ընթացքում Բակունցը կնոջը թելադրում է իր կտակը՝ ինչպես դաստիարակել իրենց տղային, նաև՝ ասում, որ գրել է լիազորագիր, որով նրան է փոխանցում իր հեղինակային իրավունքները:*

Այնուհետև «Ցուցմունքներ»-ում Զիվիջյանը շարունակում է. «Հաջորդ օրը ես մտա ՆԳԺԿ, տարա նրա համար ընթերցելու գրքեր (առաջին երեք ամիսներին թույլատրեցին տանել գեղարվեստական գրականություն) և ետ ստացա այն գրքերը, որոնք նա արդեն կարդացել էր: Քննիչի օգնական Մալկովն ինձ

---

[11] *«Հայոց լեզու և գրականություն», 2011, № 5, 39:*
[12] *«Հայոց լեզու և գրականություն», 2011, № 5, 39:*

փոխանցեց լիազորագիր-կտակը՝ գրված Բակունցի ձեռքով և հաստատված ՆԳԺԿ-ի կողմից...»[13]:

Իրականությունը ճիշտ պատկերացնելու տեսակետից հույժ կարևոր է այս ցուցմունքի յուրաքանչյուր վկայություն, ուստի՝ դեռևս շարունակենք. «Այդ գրքերի մեջ էր Գի դը Մոպասանի պատմվածքների նոր ժողովածուն: Այդ գրքի ցանկում «Պարան» պատմվածքի տակ ես նկատեցի մատիտով գրված փոքր կետեր: Այդ ինձ զարմացրեց, որովհետև այդ գիրքը նոր էր (նրանցից, որ կալանքից առաջ բերել էր Մոսկվայից): Բացեցի պատմվածքը, որի լուսանցքներն ամբողջովին սեղմված-ընդգծված էին եղունգով: Պատմվածքի բովանդակությունը բացահայտեց նրա բարոյական ծանր կացությունը: Նոյեմբեր ամսին ինձ թույլատրեցին վերջին տեսակցությունը: Նա իրեն պահում էր հանդարտ:

«Հը, ընթերցե՞լ ես պատմվածքը, այն քեզ դո՞ւր է եկել»,– հարցրեց նա ինձ: «Ծանր է»,– պատասխանեցի ես նրան: Նա ասաց, որ հարցաքննությունն ավարտված է և սպասում է դատին: «Հավանական է, պետք է մեկնել, թեպետ դեռ կտեսնենք,– ասաց նա:– Ամուր եղի՛ր, հաշվիր, որ ավտովթար է եղել, և ես վթարի եմ ենթարկվել»: Դիմելով որդուն, ով ներկա էր նաև այդ տեսակցությանը, Բակունցն ասաց. «Դու շա՞տ կամաչես, եթե քո հորը Երևանի փողոցներով տանեն դատարան»:

– Ո՛չ, հայրի՛կ,– պատասխանեց տղան: <...>»:

1937 թ. սեպտեմբերի 17-ին ինձ կալանավորեցին, մեր բնակարանն ամբողջ ունեցվածքով արգելափակեցին, իմ երեխային հանձնեցին Բակունցի եղբորը, քաղցկեղով հիվանդ մորս թողեցին պատշգամբում, իսկ ինձ տարան բանտ»[14]:

Հարցաքննություններ

Ձերբակալված Բակունցը՝ ըստ Ալազանի, անընդհատ չափել է բանտախցի լայնքն ու երկայնքը և արտասանել Տերյանի տողերը.

Դու նահատակ պիտի լինես,
Մարգարե ու մարտիրոս,
Խարույկ ու խաչ պիտի ելնես,
Ո՛չ իբրև ստրուկ, այլ հերոս[15]:

Կարճ ժամանակ անց ձերբակալել են Բակունցի գործերի մեքենագրուհուն՝ Հռիփսիկ անունով, իբր եղել է Բակունցի սիրուհին, իմացել է նրա հակահեղափոխական գործունեության մասին և չի հայտնել:

Բակունցի հարցաքննություններից առանձնացնենք Ջարենցին և «Նոյեմբեր»-ի ընդհանուր գործունեությանը վերաբերող հատվածները[16]:

Բակունցի 5. VIII. 1936 թ. հարցաքննության արձանագրությունից. «... եղել եմ մինչև 1927 թվականը «Նոյեմբեր» անունը կրող <...> գրողների խմբի ղեկավարներից մեկը: Մեր այդ խումբը, իր ստեղծագործության մեջ կատա-

[13] «Հայոց լեզու և գրականություն», 2011, № 5, 39:
[14] «Հայոց լեզու և գրականություն», 2011, № 5, 39–40:
[15] Ա լ ա զ ա ն. 1990, 65:
[16] Տե՛ս Ա լ ե ք ս ա ն դ ր. 1999, 11–114:

րելով ազգայնամոլական մի քանի սխալներ, հետագա զարգացմամբ՝ հատկապես 1933 թվականից հետո, դուրս եկավ գրական-ստեղծագործական խմբի շրջանակներից և վերաճեց հակախորհրդային քաղաքական խմբի: <...>: Խումբը փաստորեն ղեկավարում էինք ես և Զարենցը»[17]*:*

Ըստ հարցաքննության՝ խմբի գործունեությունը հակախորհրդային ուղղվածություն է ստանում Հայաստանում տիրող տնտեսական ընդհանուր ծանր դրության պատճառով՝ ընդգրկելով քաղաք, գյուղ, մշակույթ: Կոլեկտիվացման կապակցությամբ «Զարենցը գնացել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախկին քարտուղար ընկ. Կոստանյանի մոտ և խիստ վրդովվել է Հայաստանում անցկացվող կոլեկտիվացումից՝ ասելով, որ կուսակցությունը Հայաստանում կիրառում է մոսկովյան օրինակներ, կործանում է գյուղական աշխատասեր տնտեսությունները և գյուղացիներին հասցնում սովամահության[18]*:*

Ազգային քաղաքականության հարցում խումբը եկել է այն եզրակացության, որ՝ «1) Անդրֆեդերացիայի կազմում Հայաստանը նյութապես ճնշված է (կապիտալ ներդրումների բյուջեն և այլն),

2) Հայաստանը, հին և մեծ մշակույթի երկիր լինելով, բավարար չափով ներկայացված չէ Միության ազգային-մշակութային շինարարության ընդհանուր համակարգում,

3) Վրաստանում ապրող հայերը մշակութապես ճնշված են, չունեն իրենց դպրոցներն ու մշակութային հաստատությունները,

4) Հայաստանի ղեկավարությունը, վարելով սխալ ազգային քաղաքականություն, չի գնահատում անցյալի մշակութային ժառանգության (նյութական մշակույթի հուշարձանները, պեղումների գործը, էջմիածնի ձեռագրերը և այլն) յուրացման անհրաժեշտությունը:

Այս հարցերի քննարկումն սկսեց ընդունել խիստ արտահայտված հակախորհրդային բնույթ այն բանից հետո, երբ մեր խմբին միացավ Ներսիկ Ստեփանյանը»[19]*:*

7. VIII. 1936 թ. հարցաքննության արձանագրությունից. Բակունցի անունից արձանագրված է՝ Արարատի ցեմենտի 60 տոկոսը տանում են Վրաստան, իսկ Երևանում ժողտան շինարարությունը ցեմենտ չլինելու պատճառով դանդաղում է, Երևան–Աղստաֆա երկաթգծի շինարարությանը խանգարում է Բերիան: Անդրադարձ կա մոլիբդենի արդյունահանման, շաքարի գործարանի կառուցման հարցերին: Ըստ ՀԽՍՀ լուժողկոմատի 1932 թ. մի որոշման՝ տարրական դպրոցներում ուսուցիչների ռուսերենի չիմացությունը համարվել է ինտերնացիոնալիզմին խորթ ազգայնամոլություն, իսկ Կենտկոմի քարտուղարներից ոմանք հայերեն չգիտեն, նրանց և ինժեներատեխնիկական մտավորականության երեխաները սովորում են ռուսական դպրոցներում: Այստեղից նրանց ատելությունը հայերենի, հայ մշակութային արժեքների նկատմամբ և Հայաստանը ռուսականացնելու չքողարկված ծրագիրը: Արմենի հայտնի ծրագրային հոդվածը[20] *գրվել է խմբի հանձնարարությամբ:*

---

[17] Ա լ ե ք ս ա ն դ ր. 1999, 16:
[18] Ա լ ե ք ս ա ն դ ր. 1999, 17:
[19] Ա լ ե ք ս ա ն դ ր. 1999, 17:
[20] Տե՛ս «Գրական թերթ», 21. IV. 1933:

Ըստ արձանագրության՝ «Մեր խումբը կազմակերպչական և գործնական մեծ աշխատանք կատարեց հատկապես Զարենցի «Գիրք ճանապարհի» գրքի արգելման կապակցությամբ» և ամեն մի միջոցի պատրաստ էր դիմել լույս-ընծայումը գլուխ բերելու համար: Գրքի արգելումը Բերիայի հրահանգով էր[21]*:*

9. VIII. 1936 թ. հարցաքննության արձանագրությունից. «Երբ խոսք եղավ այն մասին, որ Զարենցի գիրքն արգելել է ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմը, Ստեփանյանը բառացիորեն ասաց հետևյալը. «Ա՛յ, եթե գտնվեր մի տղա, որը վերացներ Բերիային, ապա դա հայ ժողովրդի համար ավելի լավ կլիներ, քան ձեր գրքերը»»[22]*:*

Բակունցը Ստեփանյանի հետ ծանոթացել է 1933-ին Զարենցի միջոցով. ըստ արձանագրության՝ նա էլ դարձել է իրենց խմբի քաղաքական ղեկավարը և դրդել ահաբեկության: Իր և Զարենցի հարաբերությունների մասին՝ Բակունցն ասում է, որ 1934-ից խզել է կապերը Զարենցի հետ և չի հանդիպել նրան[23]*:*

2. IX. 1936-ի հարցաքննության արձանագրությունից. Խանջյանը եղել է Ստալինի մոտ, այնուհետև՝ ասել Բակունցին. «Մեր նախնիները, պարզվում է, եղել են վրացիները: Միհրդատ Պոնտացին, պարզվում է, եղել է առաջին վրացին ...»[24]*:*

4. XI. 1936-ի հարցաքննության արձանագրությունից. Զարենցն ասել է. «Ներկայումս տեղի է ունենում Հայաստանի ազգային վերածնունդ. մեր երկրում բանվոր դասակարգը երիտասարդ է, գյուղացիությունը՝ հետամնաց: Հետևաբար, միայն մտավորականությունը կարող է կատարել ազգային վերածնունդի կազմակերպիչի դերը»[25]*: «Պնդում եմ, որ Զարենցը ոչ միայն եղել է մեր հակահեղափոխական կազմակերպության կենտրոնի անդամ, այլև նրա գաղափարական ղեկավարներից մեկն էր: <...>: Ճիշտ է և այն, որ իր բնավորության բերումով նա երբեմն գործում էր ինքնուրույնաբար»*[26]*:*

Վրաստանի գրողները նյութապես ավելի բարեկեցիկ են, քան հայ գրողները: Թիֆլիսում անդրկովկասյան ժողովուրդների արվեստի օլիմպիադայի կապակցությամբ վրացիները ծաղրել են հայ մշակույթը: Ուրարտուն վերագրում են իրենց, և եթե հայերը չեն ընդունում, որ առաջացել են վրացիներից, ուրեմն ազգայնամոլներ են:

Մեղադրանքներից մեկը՝ իբր Ջեմալ փաշային սպանող հերոս վրիժառու Արտաշես Գևորգյանին Բակունցը հավաքագրել էր՝ սպանելու Բերիային:

Խոսուն են Ալազանի ցուցմունքները Բակունցի մասին: Ալազանին հարցաքննել են ձերբակալությունից 10 օր առաջ և նրա անունից արձանագրել. «Ես ունեի իմ միջանկյալ խումբը (Նորենց, Գ. Սարյան, Տարոնցի), բայց մի շարք հիմնական կողմերով պաշտպանում էի Զարենցի խմբին: Այս գրական պայքարի և Զարենցի «Գիրք ճանապարհի»-ի տպագրության հարցի կապակցությամբ ես մտերմացա Ն. Ստեփանյանի հետ: Իրոք, Ն. Ստեփանյանը գլխավո-

[21] Ա լ ե ք ս ա ն դ ր. 1999, 21:
[22] Ա լ ե ք ս ա ն դ ր. 1999, 25–26:
[23] Ա լ ե ք ս ա ն դ ր. 1999, 25–27:
[24] Ա լ ե ք ս ա ն դ ր. 1999, 48:
[25] Ա լ ե ք ս ա ն դ ր. 1999, 65:
[26] Ա լ ե ք ս ա ն դ ր. 1999, 66:

րում էր նացիոնալիստորեն տրամադրված գրողների խումբը (Զարենց, Բակունց և ուրիշներ), նրանց կանչում էր իր տուն և պայքար կազմակերպում կուսակցության գծի դեմ: Ես էլ մեկ անգամ մասնակցել եմ այդպիսի խորհրդակցության: Դա այն ժամանակ էր, երբ Զարենցի գրքի արգելման պատճառով Անդրերկրկոմի կուլտպրոպ բաժնի վարիչ Բեդիայի գլխավորությամբ սպասում էր հանձնաժողովի գալուստը: Ինձ հրավիրել էր Զարենցը: <…>: Ստեփանյանը զայրացած էր՝ թե ինչո՞ւ վրացիները պիտի որոշեն հայ բանաստեղծի գրքի տպագրության հարցը: Որոշեցինք դիմել ՀԿ(բ)Կ Կենտկոմ, որպեսզի պոեզիայի զեկուցումը համագումարում հանձնարարվի Զարենցին: Իր գրքի արգելման կապակցությամբ զայրացած էր նաև Զարենցը և ասում էր. «Սա ի՞նչ բան է՝ Ա. Խանջյանն ու Ս. Տեր-Գաբրիելյանը թույլատրում են իմ գրքի տպագրությունը, իսկ Արիսյանն ու Բեդիան՝ արգելում:

Զարենցի մոտ երբեմն տեսել եմ Ստեփանյանին: Զարենցը, Բակունցը և ես ղեկավարում էինք գրողների համագումարի նախապատրաստական աշխատանքը: Խանջյանը հովանավորում էր Զարենց-Բակունց խմբի գործունեությունը: <…>: Հարելով Զարենց-Բակունց նացիոնալիստական խմբին՝ ես թույլ եմ տվել քաղաքական կոպիտ սխալ»[27]:

Ալազանի հաջորդ հարցաքննություններից. «Այո՛, ես ընդունում եմ, որ 1933-ի վերջերից հարել եմ Զարենցի և Բակունցի գլխավորությամբ գործող գրողների հակահեղափոխական, նացիոնալիստական խմբին և հակահեղափոխական, նացիոնալիստական դիրքերից պայքար եմ մղել կուսակցության գլխավոր գծի դեմ՝ դրանով իսկ մնալով կուսակցության գլխավոր թշնամի և երկերեսանի: 1932 թ. Զարենցն ինձ անվանել է «Զեկայի ագենտ»: Բայց քանի որ ես դեմ էի նրա գրքի արգելմանը, այդ հիմքի վրա բարեկամացանք:

<…>: Մեր խմբի անդամներից Զարենցն, անկասկած, ձգտում ուներ դառնալու համահայկական դեմք, իսկ տվյալ պարագայում՝ հայ հակահեղափոխական նացիոնալիզմը միավորող կենտրոնական հանգույց: Նա իր շուրջն էր համախմբել կչիռ և հեղինակություն ունեցող կադրային մտավորականության որոշակի շրջանակներ, որպեսզի նրանց միջոցով ժողովրդին հասցնի իր ձայնը: <…>: Զարենցը և Բակունցը ծավալում էին իրենց հակահեղափոխական գաղափարների որոշակի քարոզչություն՝ ուղղված Անդրդաշնության դեմ: <…>: Ես ցանկանում եմ ընդգծել, որ Զարենցն ու Բակունցը, հատկապես Զարենցը, առանձնահատուկ ջանադրությամբ էին մտավորականության մեջ մղում հակահեղափոխական, նացիոնալիստական քարոզչություն: <…>: Երբ Զարենցին հեռացրին գրողների միությունից, Մ. Սարյանն ինձ հայտնեց իր դժգոհությունը և ասաց, որ այդ հարցով կբողոքի Կենտկոմ: <…>: Խանջյանի ինքնասպանությունից 15 օր առաջ նրա մոտ էի: Ասաց, որ Զարենցն ու Բակունցը կապ ունեին արդեն ձերբակալված Ստեփանյանի հետ: Նրանց էլ պիտի ձերբակալեին, բայց Խանջյանը թույլ չի տվել, ինչպես ինքն էր ասում՝ հայ գրականությունը կորբանար»[28]:

Ալազանի հարցաքննությանը Ներսիկ Ստեփանյանի հարցաքննությունից կցված է քաղվածք. «Այո՛, խոստովանում եմ, որ հայկական ռազմաշունչ հակահեղափոխական նացիոնալիզմի ղեկավարն եմ: Ես հովանավորում էի Զա-

---

[27] *Գասպարյան. 1994, 157–169:*

[28] *Գասպարյան. 2009, 424:*

րենցի, Բակունցի, Ալազանի գլխավորությամբ գործող գրողների նացիոնալիստական խմբի գործունեությունը»[29]:

Բերիայի կամակատար, ձերբակալված, հետո գնդակահարված Արիսյանի հարցաքննությունից. «Խանջյանն ու Ակոպովը [ՀԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղար– Դ. Գ.] հաճախ ինձ նախատում էին, որ ես անարդար եմ վարվում հայ գրողներ Չարենցի, Բակունցի, Թոթովենցի, Ալազանի հանդեպ ...»[30]:

1936 թ. օգոստոսի 19–24-ը Մոսկվայում տեղի է ունենում «Տրոցկիստական-զինովևական կենտրոն»-ի դատավարությունը: ԽՍՀՄ պետական մեղադրող, գլխավոր դատախազ Ա. Յա. Վիշինսկին ճառն ավարտում է արյունոտ կոչով. «Գնդակահարել կատաղած շներին, բոլորին մինչև վերջին մարդը»[31]: Դատավճիռը կայացրել է ԽՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական կոլեգիան: Մոսկովյան այս ալիքը հասնում է Հայաստան:

Գրական քննադատություն

Ինչ հարցաքննություններ էին բանտի գնդաններում, նույնը նաև թերթերի էջերը սևացնող հոդվածներն էին: Ստորև Բակունցի ու նաև նրա մասնակցությամբ իմաստավորվող «Նոյեմբեր» խմբակցության կապակցությամբ ներկայացնենք ամենաբնորոշները:

«Գրական թերթ»-ի «Միշտ բարձր պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը» խմբագրականից. Խանջյանը հովանավորել է նրանց, ովքեր «...մեր գրականության մեջ հանդես են գալիս որպես նացիոնալիզմի տիպիկ արտահայտիչներ (Ակսել Բակունց, Դ. Սիմոնյան, Գ. Վանանդեցի, Թոթովենց, Ալազան, Նորենց, Գ. Մահարի և ուրիշներ): <...>: Ավելին, Ա. Բակունցը՝ այդ քողարկված դաշնակը մեր կուսակցության շարքերում, Խանջյանի կողմից հայտարարվեց որպես մեր գրականության վարպետներից մեկը: [Խանջյանի հովանավորությամբ] ... հրապարակ են շպրտվել մի շարք բացարձակապես նացիոնալիստական աշխատություններ: Այդ աշխատություններից տիպական են հակահեղափոխական տրոցկիստ-նացիոնալիստ Վ. Վահանյանի, նացիոնալիստ-տրոցկիստ Ա. Բակունցի աշխատությունները, Գ. Վանանդեցու հոդվածները Խ. Աբովյանի մասին ...»[32]: Իբր Աբովյանը միջոց է բացահայտելու իրենց նացիոնալիզմը, իբր Վաղարշակ Տեր-Վահանյանի և Ներսիկ Ստեփանյանի ղեկավարությամբ՝ «ֆաշիզմի, սպիտակ գվարդիականության հետ միաձուլված», օրը ցերեկով Խանջյանի իմացությամբ ահաբեկություն են կազմակերպել «կուսակցության լավագույն գավակների դեմ»: Թոթովենցի «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» վիպակը շաղախված է «զոոլոգիական նացիոնալիզմով, թրքատյացությամբ», Բակունցի «Ծիրանի փողը» «քողարկված կերպով անցկացնում է ֆաշիստական դաշնակցության քարոզները»[33]: Բակունցի համախոհներ և նացիոնալիզմի քարոզիչներ են համարվում Ռաֆայել Ալթայանը, Սուրեն Հարությունյանը, Խորեն Սարգսյանը:

«Գրական թերթ»-ի նույն համարում տպագրվում է Ն. Զարյանի «Նացիոնալիստը խորհրդային գրողի դիմակով» ամոթալի հոդվածն ընդդեմ ձերբա-

[29] Գասպարյան. 2009, 262:
[30] Գասպարյան. 2009, 262:
[31] «Գրական թերթ», 25. VIII. 1936:
[32] «Գրական թերթ», 25. VIII. 1936:
[33] «Գրական թերթ», 25. VIII. 1936:

կալված Բակունցի: Այն ուղղված էր ոչ միայն Բակունցի, այլև Խանջյանի և նրա «հովանավորների» դեմ. «Եվ Բակունցը սողաց գրական ասպարեզ: Ընթերցողին հայտնի է նրա «գրական» գոյության սկզբնական շրջանը <...>: Բակունցն արտահայտում է այն միտքը, թե հայ գյուղացին, բնությանն ու վայրի գազաններին ձուլված, տարերային մի ֆենոմեն է և իր կենցաղով և հոգեբանությամբ չի տարբերվում արջից: Ահարոնյանական ոճով գրված այդ լղարիկ հատվածներում չկա մարդկային ոչ մի կենդանի կերպարանք, իրական կենցաղի ամբողջական ոչ մի նշույլ: Բայց գտնվեցին տկարամիտ լիբերալներ, որոնք <...> խորհրդային գրողի համբավ ստեղծեցին Բակունցի համար: <...>: Բակունցն իր գրական ողջ գործունեության ընթացքում օձային հետևողականությամբ թույն է արտադրել իր բոլոր գրվածքներում: <...>: Կոլեկտիվ տնտեսությունը նա չի տեսնում, չի նկատում տրակտորի հետքը ճանապարհի վրա, չի լսում Լենինին և Ստալինին նվիրված ժողովրդական երգերը համայնական դաշտերում աշխատող կոլտնտեսականների շուրթերից»[34]*:*

Ն. Զարյանը ծաղրում է Բակունցի լեզուն՝ «Կեղծ դիալոգ, շինծու գռեհիկ գավառաբարբառով», ինչի համար նացիոնալիստ քննադատները նրան հռչակել են վարպետ, մինչդեռ Բակունցին բնորոշ են «քստմնելի շովինիզմը», «հայրենիքի սահմանները ընդարձակելու և հակաթուրքական տրամադրությունները»: «Բակունցը գրպարտում է հայ աշխատավոր գյուղացիներին՝ իր դաշնակցական զոլոդիական թրքատեցությունը վերագրելով նրանց: Բակունցը ոչ միայն մազաչափ չի բարձրանում Ռաֆֆու ռասայական թրքատեցությունից, այլև մի աստիճան ավելի խորն է թաղվում անասնական շովինիզմի թունավոր ճահիճը: Մի՞թե պարզ չէ, որ Բակունցի բերանով խոսում է դաշնակ խմբապետը՝ <...> բացարձակ կոչ անելով դեպի Մարութա սարը»: Այդպե՛ս, որովհետև նրա տողերը հիշեցնում են հին երգը. «Առանց ահի, առանց վախի, // Քաջերի բուն Սասնա սար»[35]*:*

Նույն հոդվածում Ն. Զարյանը շարունակում է. «Ամբողջ այս վիպակը [«Որդի որոտման»] տրոցկիստական հակահեղափոխական քստմնելի մի պամֆլետ է՝ ուղղված գյուղի սոցիալիստական վերակառուցման մեր ստալինյան քաղաքականության դեմ, և Բակունցը դիտմամբ կիսատ է թողել այն, որպեսզի մարդկանց խաբի և խուսափի պատասխանատվությունից»: Դաշնակցությունից «Ինչպիսի թունավոր բագաժով է եկել մեր կուսակցության շարքերը Ա. Բակունցը»[36]*:*

Հերթը հասնում է մյուսներին. Ալազանը՝ «գրական խալտուրայի վարպետ», Նորենցը՝ «Խանջյանի թաշկինակ», Տեր-Սիմոնյանը՝ «... մինչև իր ոսկորների ծուծը փտած, հանրածանոթ ստախոս»[37]*:*

Ն. Զարյանը հասցնում է գրական այս եղեռնի վերջին հարվածը. «Իսկ մեր խորհրդային գրականությունը մեր բոլշևիկյան կենտրոնի աջակցությամբ հսկայի քայլերով առաջ կգնա՝ ազատագրվելով Ա. Բակունցի և բոլոր երանգի նացիոնալիստների ու տրոցկիստների թունավոր միջամտությունից»[38]*:*

---

[34] «Գրական թերթ», 25. VIII. 1936:
[35] «Գրական թերթ», 25. VIII. 1936:
[36] «Գրական թերթ», 25. VIII. 1936:
[37] «Գրական թերթ», 25. VIII. 1936:
[38] «Գրական թերթ», 25. VIII. 1936:

1936 թ. սեպտեմբերի 14-ին պատմաբան Հակոբ Զորյանի ստորագրությամբ գրություն է հասցեագրվում Կենտկոմ. «Քանի որ այժմ Ակսել Բակունցի տրոցկիստական-նացիոնալիստական հակահեղափոխական գործունեության մասին քննություն է կատարվում, անհրաժեշտ եմ գտնում Ձեր ուշադրությանը հանձնել մի բանավեճ 1931–1932 թթ. տեղի ունեցած, որտեղ ցայտուն կերպով դրսևորվել են Ակսել Բակունցի նացիոնալիստական հայացքները և նրա գտած հովանավորումը Կենտկոմի նախկին քարտուղար Ա. Խանջյանի կողմից»[39]:

Հակոբ Զորյանի ակնարկած հիշյալ բանավեճն ընթացել է «Նոր ուղի» ամսագրում (1931, թիվ 4, 5), ուր Զորյանը «Հայ բուրժուական պատմագրության կոնկրետ արտահայտությունները» վերնագրով գրախոսել է Հակոբ Մանանդյանի[40] «Հայաստանի առևտրի և քաղաքների մասին» (1930, ռուսերեն) գիրքը, որին ի պատասխան՝ Անդր. Ստեփանյան ստորագրությամբ, որը Բակունցի ծածկանուններից է և հայտնի էր Զորյանին, տպագրվել է «Մի գրախոսության առթիվ» գրությունը[41]: Դրանում հաշվի են առնված Մանանդյանի նկատառումները, քանի որ վերջինս հրաժարվել է գրել պատասխան հոդված: Մարքսիստ պատմաբանների ընկերությունն այդ առթիվ որոշում է կայացնում Զորյանի օգտին[42]:

1936 թ. հոկտեմբերի 6-ին բանտարկված Բակունցը «Դիմում» է հասցեագրում ՀԿ(բ) Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունուն և ՀԽՍՀ-ում Անդրկովկասի արտակարգ հանձնաժողովը պետքաղվարչության ներքին գործերի ժողովրդական կոմիսար Խաչիկ Մուղդուսուն. ներկայացնում է նաև իր ու Չարենցի գրական-ստեղծագործական, մարդկային ու առօրյա հարաբերությունները:

Հիշեցնում է 1933-ից իր և Չարենցի աստիճանաբար խզված կապը, որը հնարավոր չէր վերականգնել անգամ իրենց վերստին մերձեցնելու փորձերից հետո, մանավանդ որ Չարենցը քննադատել էր նրա հայ ազգային մտավորական տիպեր մերկացնող «Հայկական մանրէ» անտիպ վիպակը, և որ ինքը մերժում էր նաև Չարենցի գրականության լեզվի գործադրման սկզբունքների քաղաքականությունը. «... գրական լեզվում Չարենցն ինքը ազգայնամոլության հետևորդ է»[43]:

Դեմ է եղել նաև ՀԿ(բ) Կենտկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ Լևոն Արիսյանի հանդեպ Չարենցի կտրուկ վերաբերմունքին: Տարաձայնությունները խորացել են ԽՍՀՄ գրողների հիմնադիր համագումարից հետո, քանի որ Չարենցը ստեղծագործական քայլ չարեց «խորհրդային գրականության օգտին»: Գրողների միությունից հեռանալու Չարենցի դիմումից հետո մեկընդմիշտ խզել է կապերը: «Նրա [Չարենցի] հետ ես, իհարկե, ամեն ինչ մեկընդմիշտ [վերջ եմ տվել], և դա՝ դեռ վաղուց, տարիուկես սրանից առաջ: Ո՛չ նրա սպառնագին նամակը՝ գրված նրա մի քանի հակախորհրդային արարքների դեմ իմ ունեցած ելույթի հաջորդ օրը, ո՛չ մեզ վերստին մերձեց-

[39] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1, գ. 1, ց. 16, թ. 62:*
[40] *«Նոր ուղի», 1931, № 4, 131–144:*
[41] *«Նոր ուղի», 1931, № 5, 151–159:*
[42] *«Նոր ուղի», 1932, № 1, 153:*
[43] *Ա լ ե ք ս ա ն դ ր. 1999, 48–55:*

նելու Վանանդեցու և այլոց փորձերը, ոչինչ չէին կարող վերականգնել ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար խզված կապը՝ սկսած 1933 թվականից (Զարենցի կողմից իմ ձեռագիր երգիծական ստեղծագործության քննադատությունից հետո <…>): Հայտնի է նաև, որ շուտով՝ մեր խմբի գրողների գրական ստեղծագործությունների մեջ ազգայնամոլության դրսևորման վերաբերյալ իմ քննադատական ելույթից հետո, այդ խմբի անդամներ Զարենցը և Արմենը գրավոր դիմումով հրաժարվեցին իրենց սխալներն ընդունելուց և շարունակեցին պաշտպանել Արմենի խմբակային հոդվածը ու հին խմբակի ամբողջ գրական ծրագիրը: Կասեմ միայն, որ ընկ. Լ. Արիսյանի հոդվածում և գրողների համագումարում նրա ճառի մեջ՝ իմ ելույթը՝ որպես օգտակար ինքնաքննադատության օրինակ, արժանացել է դրական գնահատականի: Մոսկվայի գրողների համագումարում ես Զարենցի հետ չէի. ես ելույթ ունեցա ըստ Գորկու զեկուցման, նա՝ ըստ Բուխարինի, և «Պրավդա»-ում տպագրված մեր ելույթները հին խմբակի համար ընդհանուր կամ բնորոշ ոչ մի հետք չէին բովանդակում, թեև Նաիրի Զարյանը ևս, ինչպես պնդում են հայոց պատվիրակության մնացած անդամները, նույնիսկ մոսկովյան համագումարում փորձում էր շարունակել խմբակային պայքարը՝ վկայակոչելով Խանջյանի ճառը: Հայտնի է, որ դրա համար «Պրավդա»-ն նրա ելույթի հաղորդագրությունը չտպագրեց, իսկ համագումարի նախագահությունն ընդհատեց նրա ելույթը: Իմ առաջին հանդիպումը Զարենցի հետ տեղի ունեցավ 1934 թ. վերջին, արդեն իսկ պարզ էր, որ մենք երկար չէինք կարող միասին լինել:

Քանի որ այդ ամեռ ես աշխատում էի Էջմիածնում և մինչև 1935 թվականի փետրվարը հազվադեպ էի քաղաք գալիս, այսինքն՝ մինչև գրողների միությունից նրա հեռանալու դիմումը, ինչն էլ առիթ ծառայեց Զարենցի դեմ իմ ելույթին, որից հետո մեկընդմիշտ խզեցի [կապերս] նրա հետ»:

Բակունցն այստեղ իր մասին ասում է. «Ես հրատարակել եմ երկու գիրք՝ «Եղբայրության ընկուզենիները» և «Լիքեր Արմենիեր»-ը» և ավելացնում՝ վերջինը թարգմանված է ռուսերեն, դրա մասին դրական են արտահայտվել ԽՍՀՄ ԳՄ քարտուղարներ Վլադիմիր Ստավսկին, Միխայիլ Կլիմկովիչը, գրողներ Վլադիմիր Կատաևը, Մարիետա Շահինյանը, «Творчество народов СССР» *ալմանախի խմբագրությունը*[44]*:*

Մամուլում շարունակվում են հալածանքները: Տպագրվում է Վահան Թերզիբաշյանի «Հակահեղափոխական նացիոնալիստների գրական հնարքները» զրպարտագիրը՝ ընդդեմ Բակունցի, Թոթովենցի, ովքեր, իբր, ճնշել են Արազին, Ստեփան Զորյանին, Նաիրի Զարյանին. ««Ազգային հատկանիշների խտացման» ռեակցիոն թեորիայի պաշտպանները փաստորեն ժխտում էին մեր գրականության և արվեստի սոցիալիստական էությունը, նրա ինտերնացիոնալ հեղափոխական բովանդակությունը»[45]*:*

Զարենցի «Ա. Բ.-ին» բանաստեղծությունը

Ամատունու, Մուղդուսու և հայ «գրողների» կողմից Բակունցին հոգեպես և ֆիզիկապես քրքրող այս օրերին՝ 1936 թ. հոկտեմբերի 14-ին, Զարենցը

---

[44] *Գասպարյան. 2009, էջ 241:*

[45] *«Գրական թերթ», 12. X. 1936:*

գրում է «Ա. Բ.-ին» բանաստեղծությունը՝ որպես եղբայրական զորակցություն հարցաքննություններից ու կտտանքներից բանտում հեծող գրական ընկերոջը: Նույն գիշերը Չարենցը գրել է բանաստեղծության այլ տարբերակներ, որոնց մեջ «ներում» է նրա «հանցանքը». «Ես ներում եմ ահա իմ անաղարտ // Մտերմության, սիրո առևանգումն անգամ ...»[46]: «Ես ներում եմ ահա խեղճությունը քո իբրև սովորական // Դժբախտություն, երբ քո գլխին հանկարծ // Ընկնում է քար վերից ...»[47]: Ժամանակն ու միջավայրը քաղաքական թունավորումներով սառեցրել էին նրանց հարաբերությունները: Մի թանկ հարաբերության ավարտի գիտակցությունը Չարենցին մղում է եղբայրորեն ձեռք մեկնելու նրան և ներբողելու

... ահա կրկին անեղծ
Իմ շուրթերով, ինչպես օրեր առաջ. –
Երբ դեռ դու ա՛յր էիր մի անարատ,
Եվ ես ընկերն էի քո բանաստեղծ[48]:

Ներքին խոովքն այստեղ մնացել է միայն մեկ բառի մեջ՝ «երբ դեռ»: Այս հարաբերությունների վրա լույս են սփռում Բակունցի հարցաքննությունների արձանագրություններն ու բանտից գրած դիմումները՝ հատկապես հոկտեմբերի 6-ին Ամատունուն և Մուղդուսուն հասցեագրած ահավոր ողբերգական գրությունը:

Բակունցի ճակատագիրն արդեն որոշված էր. Չարենցը նրան գեղարվեստական տեսք տվեց, բայց հարցաքննություններին հաջորդող դատավճիռներն այլ բան էին ասում:

Ինքնարդարացման հուսահատ փորձեր և ՊԱՉ = պատժի առավելագույն չափ = գնդակահարություն

ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունին 1936 թ. հոկտեմբերի 2-ին զեկուցում է Երևանի կուսակցական կազմակերպության ակտիվի նիստում, հրապարակում ձերբակալված Բակունցի «ցուցմունքը» և խիստ քննադատության ենթարկում նրան: Իսկ Բակունցը 1936 թ. հոկտեմբերի 10-ին բանտից հերթական «Դիմում» է հղում հանրապետության ղեկավարությանը՝ ապացուցելու իր անմեղությունը. «Ես Խորհրդային Հայաստանի լավագույն արձակագիրն էի («Պրավդա», 1934), հայ խորհրդային գրականության կառքին լծված քեղաձի, թողեք, որ ես մնամ Խորհրդային Հայաստանի դռան հավատարիմ շունը»[49]:

1937 թ. ապրիլի 16-ի ՀԳՄ ընդլայնված նիստում զեկուցում է գրողների միության ղեկավարի դերում հայտնված Գևորգ Աբովը: Մեղադրական խոսք է ասում մոսկովյան գրաքննադատ Վալերի Կիրպոտինը: Ելույթ ունեցողների մեջ են Հրաչյա Քոչարը, Սուրեն Վահունին, Արտաշես Ոսկերչյանը, Հմայակ Սիրաքը, Մկրտիչ Կորյունը, Սողոմոն Սողոմոնյանը, Տիգրան Հախումյանը,

[46] Չ ա ր ե ն ց. 1983, 570:
[47] Չ ա ր ե ն ց. 2007, 104:
[48] Չ ա ր ե ն ց. 1983, 165:
[49] Գ ա ս պ ա ր յ ա ն. 1999, 55:

Սիմոն Հակոբյանը և ուրիշներ: Ընդհանուր այս սև հորձանքին իրենց ձայնն են միացնում նաև Ավետիք Իսահակյանն ու Դերենիկ Դեմիրճյանը: Աբովը Զարենցին հռչակում է նացիոնալիստ, հակահեղափոխական, հանցագործ, մինչդեռ կուսակցությունը «նրա նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում». ըստ էության, ասում է, թե ինչո՞ւ Զարենցը դեռևս ձերբակալված չէ:

Աբովն ու վերը նշված անձինք Զարենցին հռչակում են իր իսկ նվիրական գաղափարների թշնամի, և նա չի կարողանում ապացուցել լույսի պես պարզ այդ ճշմարտությունը: Մարտիրոս Սարյանը հիշում է. «Մի քանի վաստակավոր համբակներ և խառը այդ ժամանակներում ջրի երես թռած նորելուկ կրիերիստներ ատելով ատում էին Զարենցին: Ժողովների, գրական-գեղարվեստական հավաքույթների, գրավոր ու բանավոր վեճերի ժամանակ՝ բամբասանքի կարգով, բոլոր միջոցներով պախարակում, սևացնում էին նրան: Քաղաքական մեղադրանքներ էին բարդում գլխին: Ոչ նախանձն էր պակաս, ոչ էլ ծախու ճանապարհով առաջ գնալու տենդը: Հիշում եմ, Հայաստանի գրողների համագումարում, դեմքը դարձնելով Մոսկվայի ներկայացուցիչների խմբին (կարծեմ գրականագետ Կիրպոտինն էր), Զարենցը ամբիոնից բողոքում էր իր վիճակից: Ռուսերեն, ծայրահեղորեն բորբոքված, գոռաց. «Ինձ խեղդո՛ւմ են»... Այս ահավոր ճիչը մինչ այժմ էլ հնչում է ականջումս...»[50]: Ահա այսպես՝ կատաղած, չարացած գրական ոհմակը վրեժխնդիր է լինում անպաշտպան հանճարից:

Եվ հուսահատության մատնված 1934 թ. մարտի 1-ի գրառումներում՝ խոսում է ինքն իր հետ. «Քանզի չկա տանջանք ավելի մեծ և պատիժ ավելի սև, քան դատել մարդուն նրա սրբազան գաղափարի, նրա ողջ կյանքի միակ գործին դավաճան լինելու համար»[51]:

«Նոյեմբեր» խմբի ամոթալի մերկացումներով է հանդես գալիս անգամ Մկրտիչ Արմենը և Բակունցին բնորոշում որպես «կուստոմսավոր դաշնակցական»[52], Զարենցի, Բակունցի կողքին հիշատակում Ներսիկ Ստեփանյանին, տրոցկիզմի մեջ մեղադրված Վաղարշակ Տեր-Վահանյանին, նրանց համարում «սրիկաների ոհմակ», ավելացնում է նաև այլ անուններ, որպես չիրականացված չարիք հայտնում, որ անգամ Ալազանը և ոմանք ցանկացել են Զարենցի թեկնածությունն առաջադրել Հայաստանի գրողների միության նախագահի պաշտոնում, նույնիսկ Զարենցին տեղյակ են պահել կուսֆրակցիայի նիստերի բովանդակությանը ...

Բանտում Բակունցն այլևս չպետք է տեսներ արևի լույս և պիտի սպասեր մահվան, Զարենցը Կիրպոտինի կողմից պետք է հռչակվեր ժողովրդի թշնամի. «...նա, ով կոնֆլիկտի մեջ է մտնում ժողովրդի հետ, ով անցնում է նրա թշնամիների ճամբարը, կանգնում է վտանգավոր ուղու վրա: Եվ ահա, այդպիսի վտանգավոր ուղու վրա է այժմ գտնվում Զարենցը, ինչի մասին պետք է ասել լիաձայն»[53]:

---

[50] *Զարենցի հետ: Հուշեր. 1997, 409:*

[51] *Զ ա ր ե ն ց. 2017, 261:*

[52] *Զ ա ր ե ն ց. 2017, 261:*

[53] *ՀՀ գրականության և արվեստի թանգարան, Գրողների միության ֆոնդ (այսուհետ՝ ԳԱԹ, ԳՄՖ), № 16–17:*

Հրաչյա Քոչարը հայտարարում է. Զարենցի մեջ «... մենք տեսնում ենք ռեակցիոն լեզու, ռեակցիոն ոճ: <...>: Իր գրական և հասարակական գործունեությամբ վերջին տարիների ընթացքում Զարենցը մի քար էր՝ ընկած խորհրդային պոեզիայի ճանապարհին: Այսօր, ընկերնե՛ր, երբ մենք խոսում ենք սոցիալիստական ռեալիզմի մասին, անշուշտ, պետք է Զարենցի այս գրականությունը ջախջախվի և դեն շպրտվի, որպեսզի իր ազդեցությունը չունենա երիտասարդ գրողների վրա»[54]*:*

Նախորդ օրվա՝ 1937 թ. ապրիլի 16-ի ջարդարարությունից հետո այս խմբակային մարդասպանությունը նոր թափ է առնում ապրիլի 17–21-ին տեղի ունեցած հայ գրողների ընդհանուր ժողովում[55]*:*

1937 թ. մայիսի 26-ից հունիսի 2-ը գումարվում է ՀԿ(բ)Կ X համագումարը: ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունին իր ճառում մահվան դատավճիռ է կայացնում Զարենցի, Բակունցի և նրանց հարազատների համար: Առանձին բաժնով ներկայացված են «Գրականության և արվեստի հարցերը»: Ամատունին խիստ քննադատում է Զարենցին, Բակունցին, նրանց համախոհ արդեն իսկ ձերբակալված գրողներին և «Նոյեմբեր» միության գործունեությունը: Ըստ նրա՝ խանջյանի հանձնարարությամբ «դաշնակ» Բակունցն առաջարկել է ֆիլմ նկարահանել և ցուցադրել «դաշնակ ավանտյուրիստների հարձակումը Օտտոմանյան բանկի վրա, պահանջում էին կինոնկար պատրաստել հակահեղափոխական դաշնակ-խմբապետ Անդրանիկի մասին»[56]*:*

Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան ներկայացնում է որպես Ռուսաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի մասնաճյուղ, իսկ «Նոյեմբեր»-ը՝ սպեցիֆիկյան ուղղվածության ազգայնական կազմակերպություն:

««Նոյեմբեր» խմբակը, որ առաջ էր եկել 1925 թ. Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի նացիոնալ-ուկլոնիստական-սպեցիֆիկյան ղեկավարության աջակցությամբ [ակնարկում է Ա. Մյասնիկյանին և Ա. Հովհաննիսյանին], սնվում էր սպեցիֆիկների հակահեղափոխական թեորիայով, որը ժխտում էր Հայաստանում պրոլետարական գրականություն ստեղծելու անհրաժեշտությունն ու հնարավորությունը, հայկական խորհրդային գրականությունը հակադրում էր ռուսական խորհրդային գրականությանը: Հենց այդ խմբակի ձայնափողն էր հանդիսանում գրող Մ. Արմենը, որն ապրիլի 23-ի որոշումից հետո հանդես եկավ «ազգային հատկանիշների խտացման» վերաբերյալ «տեսությամբ», որը, ըստ էության, մարտնչող նացիոնալիզմի պրոպագանդ էր: Մեր նվաճումների ազդեցության տակ իր դիրքերի հակահեղափոխականությունը խոստովանեց գրող Եղիշե Զարենցը: Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի անունով ուղղած իր նամակում նա հայտարարում է. «Ես նույնիսկ չեմ կասկածում, որ, իրոք, իմ սխալներն ունեն նացիոնալիստական, հետևաբար և (սոսկում եմ ասել) հակահեղափոխական, ուրեմն և հակախորհրդային էություն»: Այս խոստումները և իր սխալների ու վարմունքի քննադատությունը Զարենցին պարտավորեցնում են մինչև վերջը գիտակցել իր հանցանքը խորհրդային գրականության հանդեպ և գործնականում նոր ստեղծագործական պրոդուկցիայով ապացուցել, որ նա իսկապես դառնում է լիարժեք խորհրդային գրող: Ժամանակն է,

---

[54] *ԳԱԹ, ԳՄՖ, № 16–17:*

[55] *Տե՛ս «Գրական թերթ», 23. IV., 01. V., 12. VI. 1937:*

[56] *«Գրական թերթ», 12. VI. 1937:*

վերջապես, որ Չարենցը լրիվ հաշիվ տա իրեն իր ամբողջ ուղու մասին և դադարեցնի թե իր և թե գրականության հանդեպ երկերեսանիություն անելը: Նա պետք է հասկանա, որ ամենից առաջ հարկավոր է անկեղծություն»[57]*:*

Չարենցն արյան հրդեհների այս խելագար շուրջպարի մեջ էր:

Ամատունին գնահատող խոսք է ասում Իսահակյանի, Վշտունու, Զարյանի, Սիրասի, Արազիի մասին, հանդուրժում ուղեկիցներ Դեմիրճյանին, Զորյանին, Մանվելյանին, ովքեր «վերակառուցվել» են ... Առանձին դաժանությամբ է խոսում, իբր, Խանջյանի հովանավորությամբ և Ներսիկ Ստեփանյանի, Դրաստամատ Տեր-Սիմոնյանի ու Ակսել Բակունցի ղեկավարությամբ գործող «տրոցկիստական նացիոնալիստական տեռորիստական կենտրոնի» արդեն իսկ ձերբակալված անդամների մասին, որոնք ոչ միայն վնասարար գործունեություն էին ծավալում գրական ասպարեզում, այլև նախապատրաստում էին ահաբեկություն կուսակցության ղեկավարության դեմ»:

Չարենց-Բակունց կապի սրման կապակցությամբ 1937-ի մայիսի 30-ին Ամատունուն հղած նամակում Չարենցն ստիպված է լինում հայտնել. «... ես ահավասիկ երեք տարուց ավելի է, որ քաղաքականապես, գրական, անգամ կենցաղային առումով սահմանագծվել եմ Ակսել Բակունցից»[58]*:*

Բանտային հարցաքննությունների ու դիմումների մեջ նույնն էր ասում նաև Բակունցը: Չարենցն ու Բակունցն անջրպետը գիտակցաբար խորացնում էին՝ փորձելով մեկը մյուսին սահմանագծել քաղաքական մեղադրանքներից:

1937 թ. հուլիսի 2-ին՝ համագումարի վերջին օրը, փրկության հույսով Բակունցը բանտից երրորդ դիմումն է հղում ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմին: Հուլիսի 3-ի վերջին՝ չորրորդ դիմումն հղում է ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմին և վերահսկողության գծով անդրկովկասյան զինվորական հանձնաժողովի դատախազին: Բակունցն ամեն կերպ ջանում է ապացուցել իր անմեղությունը: Ապարդյուն: Հուլիսի 6-ին Մուղդուսին հաստատում է Բակունցի «Մեղադրական եզրակացությունը», ըստ որի՝ նա «իրեն մեղավոր ճանաչեց» որպես «հակահեղափոխական տրոցկիստական ազգայնամոլական կազմակերպության անդամ», «հակահեղափոխական գրողների կազմակերպության» ղեկավար, որը նպատակ ուներ սպանել Ստալինին և Բերիային, «կազմակերպությունը կապված էր Մոսկվայի «Միացյալ կենտրոնի» հետ»: Հաջորդ օրը՝ հուլիսի 7-ին, ԽՍՀՄ գերագույն դատարանի զինվորական հանձնաժողովի արտագնա նիստը փակ դատական խորհրդակցությամբ Բակունցի վերաբերյալ կայացնում է որոշում, որից հետո հրապարակվում է դատավճիռը:

Բակունցը դատապարտվում է պատժի առավելագույն չափի՝ գնդակահարության, անձնական ունեցվածքի բռնագրավումով:

1937 թ. հուլիսի 8-ին Երևանում ի կատար է ածվում Բակունցի գնդակահարության դատավճիռը: Քանհինգ օր առաջ լրացել էր նրա ծննդյան 38-րդ տարելիցը:Նրա հետ նույն օրը գնդակահարվում են Ներսիկ Ստեփանյանը, Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, Արտաշես Գևորգյանը (1922-ին Թիֆլիսում ոճրագործ Ջեմալին ահաբեկած վրիժառուներից մեկը) և ուրիշներ:

Ըստ բանտապետ Սահակ Ասլանովի՝ Բակունցին գնդակահարել են Թոխմախ լճի շրջակայքում, գնդակահարողներից մեկը եղել է ինքը: Այդ մասին

---

[57] *«Գրական թերթ», 12. VI. 1937:*

[58] *Չ ա ր ե ն ց. 1996, 341:*

պատմել է Ալազանին և կալանավորված այլ գրողների, երբ ինքը՝ Ասլանովը ևս, կալանավորված էր և համոզված էր, որ իրեն կգնդակահարեն[59]*:*

1955 թ. մարտի 2-ին ԽՍՀՄ գերագույն դատարանի գլխավոր զինվորական դատախազությունն արդարացնում է Բակունցին: Բակունցն անմեղ էր գնդակահարվել: Նրա դեմ հարուցված № 4131 մեղադրական գործը կարճվում է:

Սկսվում է մեծ գրողի ճամահու կյանքը …

Եզրակացություն

1933 թ. սկսած՝ պատմական հայրենիքը ոգեկոչող «Ծիրանի փողը» հայրենասիրական պատմվածքի պատճառով Բակունցի դեմ սկիզբ առավ գրական և կուսակցական մարմինների քննադատություն: Այդ քննադատությունն աճեց, խորացավ ու սաստկացավ հետագա տարիներին: 1936 թ. օգոստոսի 9-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունու օրոք նա հեռացվեց կուսակցությունից ու գրողների միությունից, մեղադրվեց «նացիոնալիզմի» ու «տեռորիզմի» մեջ և ձերբակալվեց: Բակունցը բանտում մնաց 11 ամիս և ենթարկվեց բարոյական ու ֆիզիկական դաժան հալածանքների: Գնդակահարվեց 1937 թ. հուլիսի 8-ին Երևանում: Բանտում անցկացրած Բակունցի օրերի մասին վկայում են հարցաքննությունների արձանագրությունները հանրապետության ղեկավարությանը նրա հասցեագրած դիմումները և այլ վավերագրեր: Առանձնահատուկ է նրա կնոջ՝ Վարվառա Զիվիջյանի «Ցուցմունքներ» վերնագրված գրությունը, որ նա շարադրել է 1954 թ. Բակունցի արդարացման կապակցությամբ:

Ա. Բակունցը ժամանակին մոլեգնած քաղաքական հալածանքների զոհերից մեկն է:

Բակունցն արդարացվեց 1955 թ. մարտի 2-ին: Տպագրվեցին նրա գրքերը և «Երկեր»-ի (1972–1984) քառահատոր գիտական հրատարակությունը, նշվեցին և նշվում են նրա հոբելյանները, և գրողը շարունակում է իր ընդհատված կյանքը սերունդների գիտակցության մեջ:

Դավիթ Գասպարյան – բ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարի հայ գրականության ու մշակույթի պատմություն, Եղիշե Չարենց: Հեղինակ է 80 գրքի և շուրջ 1300 հոդվածի: ORCID:0009-0004-7317-4535. grakanaget gasparyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալազան Վ. 1990, Տառապանքի ուղիներով, Երևան, «Սովետական գրող», 290 էջ:

Արմեն Մկրտիչ. Չարենցի և հարակից խնդիրների մասին. – «Գրական թերթ» (Երևան), 21. VI. 1933:

Ալեքսանդր (Ակսել) Ստեփանի Բակունց. Մեղադրական գործ № 4131. 1999 (աշխատասիրությամբ՝ Դ. Գասպարյանի), Երևան, «Հրազդան» ՍՊԸ, 192 էջ:

Բակունց Ա. 1984, Երկեր, հ. 4, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 664 էջ:

[59] *Ա լ ա զ ա ն. 1990, 64:*

Գասպարյան Դ. 2009, Ակսել Բակունց: Կյանքը և ստեղծագործությունը, Երևան, «Զանգակ», 544 էջ:

Գասպարյան Դ. 1994, Փակ դռների գաղտնիքը, Երևան, «Ապոլոն», 728 էջ:

Գասպարյան Դ. 2017, Հայ գրականություն, գիրք 6, Երևան, «Տիգրան Մեծ», 736 էջ:

«Գրական թերթ» (Երևան), 25. VIII., 12. X. 1936, 23. IV., 1. V., 12. VI., 1937:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1, գ. 1, g. 16, թ. 62–66:

«Հայոց լեզու և գրականություն» (Երևան), 2011, № 5, էջ 39–41:

ՀՀ գրականության և արվեստի թանգարան, Գրողների միության ֆոնդ, № 16–17:

Մկրտչյան Հ. Ակսել Բակունց, Եղիշե Չարենց և ուրիշներ. – «Գրական թերթ» (Երևան), 17. III. 1989:

«Նոր ուղի» (Երևան), 1931, № 4, էջ 131–144, № 5, էջ 151–159:

Չարենց Ե. 1983, Անտիպ և չհավաքված երկեր, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 712 էջ:

Չարենց Ե. 1996, Նորահայտ էջեր, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 636 էջ:

Չարենցի հետ. 1997, Հուշեր, Երևան, «Նաիրի», 424 էջ:

Չարենց Ե. 2007, Վերջին խոսք, Երևան, «Հայագիտակ», 328 էջ:

Չարենց Ե. 2017, Գիրք մնացորդաց, Երևան, «Տիգրան Մեծ», 486 էջ:

АКСЕЛЬ БАКУНЦ – ЖЕРТВА ПОЛИТИЧЕСКИХ РЕПРЕССИЙ (1936–1937 гг.)

ДАВИД ГАСПАРЯН

Р е з ю м е

Ключевые слова: Аксель Бакунц, политические репрессии, задержание, арест, допрос, приговор, расстрел.

Выдающийся армянский прозаик Аксель Бакунц (1899–1937) подвергался критике как «националист» на партийных собраниях и в литературной печати с 1933 года. В расцвете творческих сил ему, помимо обвинения в национализме, приписали также терроризм. Писателя арестовали 9 августа 1936 года. А. Бакунц был заключен в тюрьму на 11 месяцев. За это время он подвергся жестоким моральным и физическим пыткам. 8 июля 1937 года в Ереване был приведен в исполнение его приговор к наивысшему наказанию – расстрелу.

Сохранились протоколы допросов Бакунца, заявления, адресованные главе республики из тюрьмы и другие материалы. Они содержат много новых фактов о его жизни и творчестве и помогают пересмотреть многие реалии.

А. Бакунц был оправдан 2 марта 1955 года. Были напечатаны его книги, научное издание четырехтомника «Сочинений» (1972–1984), отмечались и

отмечаются его юбилеи, и писатель продолжает свою прерванную жизнь в сознании поколений.

Давид Гаспарян – д. филол. н., проф., ведущий научный сотрудник отдела новейшей истории Института истории НАН РА. Научные интересы: история армянской литературы и культуры XX века, Егише Чаренц. Автор 80 книг и около 1300 статей. ORCID:0009-0004-7317-4535.
grakanaget gasparyan@mail.ru

AKSEL BAKUNTS: A VICTIM OF POLITICAL VIOLENCE (1936–1937)

DAVID GASPARYAN

S u m m a r y

Keywords: Aksel Bakunts, political persecution, arrest, detention, interrogation, sentence, execution by shooting.

The prominent novelist Aksel Bakunts (1899–1937) was criticized as a "nationalist" at party meetings and in the literary press as early as 1933. At the height of his creative powers, in addition to being accused of nationalism, terrorism was also attributed to him. The writer was arrested on August 9, 1936. Aksel Bakunts was imprisoned for 11 months. During that time, he was subjected to a severe moral and physical torture. On July 8, 1936, his sentence to the highest punishment, execution by shooting, was carried out in Yerevan.

Records of his interrogations, statements addressed to the head of the republic from prison and other documents have been preserved. They contain many new facts about his life and work and help to reconsider many realities.

Aksel Bakunts was acquitted on March 2, 1955. His books as well as a scientific edition of the four-volume "Works" were published (1972–1984). His anniversaries have been always celebrated and the writer continues his interrupted life in the minds of generations.

David Gasparyan – Doctor of Philological Sciences, Professor, Leading Researcher at the Department of New History of the Institute of History of NAS RA. Scientific interests: History of Armenian literature and culture of the XX century, Yeghishe Charents. Author of 80 books and about 1300 articles. ORCID:0009-0004-7317-4535. grakanagetgasparyan@mail.ru

Պատմական գիտություններ • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2024 № 3